



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 ապրիլի 2019 թվականի թիվ 27-Ա
ք. Երևան

«ՏԱՊԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՍՈՒՍԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 51-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով «ՏԱՊԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու մասին 2019 թվականի փետրվարի 7-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Մերժել «ՏԱՊԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության դիմումը՝ հետևյալ պատճառներով.

1) Բիզնես ծրագրի համաձայն ընկերությունը մինչև առաջին ակնկալվող շահույթ ստանալը նախատեսում է կատարել 4 800 000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ ներդրում, սակայն ներկայացված փոխառության պայմանագրով տնօրենի կողմից տրամադրված գումարը կազմում է 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ծրագրվում է անհրաժեշտ ներդրումը համալրել նաև սեփական միջոցներից և այլ ակտիվներից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փոխատվական միջոցների ներգրավումից, սակայն բավարար ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր ներկայացված չեն:

2) Աշխատակազմի վերաբերյալ ներկայացված տեղեկությունները թերի են, աշխատողներից երկուսի կրթության մասին տվյալները բացակայում են:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՏԱՊԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ստանալու օրվանը հաջորդող մեկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. ապրիլի 4
ք. Երևան